ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 46 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 17-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածների՝

Փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տարերային աղետների բաժնի հրահանգիչների Փրկարար

ծառայության պաշտոնի անձնագրերի 3.1. կետի «Ունի բարձրագույն (տեխնիկական, երկրաբանական, շինարարական, ֆիզիկական կամ զինվորական) կրթություն» բառերը փոխարինել «Բարձրագույն կրթություն» բառերով:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ 14.05.2024թ.

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
202[illegible] թ. 05.14-[illegible] N 46-[illegible] հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՀՐԱՀԱՆԳԻՉ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության (այսուհետ՝ Վարչություն) տարերային աղետների բաժնի (այսուհետ՝ Բաժին) հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.2-Ա-6) :

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի հրահանգիչն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Բաժնի հրահագիչը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի հրահանգչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս հրահանգիչը.

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. Բաժնի պետին, Վարչության պետին, Փրկարար ծառայության տնօրեն-ՆԳ նախարարի տեղակալին (այսուհետ՝ Տնօրեն) տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ տեղեկատվավերլուծական համակարգչային ծրագրերի միջոցով.
2. աշխատանքներ է իրականացնում իր կարգապահական ու մասնագիտական որակների բարձրացման ուղղությամբ.
3. իրականացնել Բաժնին հանձնարարված աշխատանքները, Բաժնի և Վարչության գործառույթներին համապատասխան՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված իրավասությունների կատարումը.
4. պարբերաբար Բաժնի պետին ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների ու ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ.
5. Վարչության պետի (տեղակալի), Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- իր իրավասությունների սահմաններում մասնակցել բնաձին արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության պաշտպանությանն ուղղված, ինչպես նաև սպառնացող վտանգի գնահատման ծրագրերի և նախագծերի մշակմանը.

- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ծրագրերի և պլանների մշակմանը.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման թեմաներով ուսումնավարժությունների, վարժանքների և սեմինարների կազմակերպմանն ու անցկացմանը.
- իր իրավասության սահմաններում մասնակցել տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների կատարմանը.
- մշակել տարերային աղետների հիմնահարցերին վերաբերվող օրենսդրական և տարբեր նորմատիվ փաստաթղթերի նախագծեր.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների ոլորտին վերաբերվող միջազգային համագործակցության փաստաթղթերի նախագծերի մշակմանը,
- ստեղծել և վարել տարերային աղետները բնութագրող բոլոր տարրերի, հետևանքների կանխատեսման և կանխարգելման միջոցառումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական բազա.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների մոնիթորինգի համակարգի ստեղծման ուղղությամբ հանրապետության գիտական, գիտահետազոտական, գիտափորձարարական և նախագծային կազմակերպությունների աշխատանքներին.
- Վարչության պետի, Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.
- գրանցել և մշտապես թարմացնել ՀՀ տարածքում տեղի ունեցած տարերային աղետների վերաբերյալ տվյալների տեղեկատվական բազան.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել ռիսկերի նվազեցման, վտանգավոր տարածքներում տարերային աղետների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ծրագրերի և պլանների մշակմանը.
- մշակել տարերային բնույթի արտակարգ իրավիճակներին վերաբերվող իրավական ակտերի, նախագծերի, պլանների, ծրագրերի, մեթոդական փաստաթղթերի նախագծեր.
- նախապատրաստել տարերային արտակարգ իրավիճակների փաստերի, բնույթների, ծավալների և պաշտպանական միջոցառումների մասին անհրաժեշտ տվյալներ, նյութեր և տեղեկություններ.
- հավաքել, մշակել և վերլուծել գրանցված տարերային արտակարգ իրավիճակների և պատճառված վնասի չափերի վերաբերյալ տեղեկատվությունը.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների հետևանքով առաջացած վնասներն ու նրանց պատճառներն ուսումնասիրող հանձնաժողովների աշխատանքներին.
- իր իրավասությունների սահմաններում համակողմանի աջակցություն ցուցաբերել Ծառայության տարածքային ստորաբաժանումներին՝ տարերային ռիսկերի նվազեցման աշխատանքների իրականացման ուղղությամբ.
- իր իրավասությունների սահմաններում մեթոդական և գործնական օգնություն ցուցաբերել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ տարերային աղետների ռիսկի նվազեցման աշխատանքների կատարման ուղղությամբ:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և

մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության մայորի կոչում:

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2024 թ. 05 14-ի N 46-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՀՐԱՀԱՆԳԻՉ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության (այսուհետ՝ Վարչություն) տարերային աղետների բաժնի (այսուհետ՝ Բաժին) հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.2-Ա-8) :

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի հրահանգիչն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Բաժնի հրահագիչը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի հրահանգչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս հրահանգիչը.

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. Բաժնի պետին, Վարչության պետին, Փրկարար ծառայության տնօրեն-ՆԳ նախարարի տեղակալին (այսուհետ՝ Տնօրեն) տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ տեղեկատվավերլուծական համակարգչային ծրագրերի միջոցով.
2. աշխատանքներ է իրականացնում իր կարգապահական ու մասնագիտական որակների բարձրացման ուղղությամբ.
3. իրականացնել Բաժնին հանձնարարված աշխատանքները, Բաժնի և Վարչության գործառույթներին համապատասխան՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված իրավասությունների կատարումը.
4. պարբերաբար Բաժնի պետին ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների ու ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ.
5. Վարչության պետի (տեղակալի), Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- իր իրավասությունների սահմաններում մասնակցել բնաձին արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության պաշտպանությանն ուղղված, ինչպես նաև սպառնացող վտանգի գնահատման ծրագրերի և նախագծերի մշակմանը.

- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ծրագրերի և պլանների մշակմանը.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման թեմաներով ուսումնավարժությունների, վարժանքների և սեմինարների կազմակերպմանն ու անցկացմանը.
- իր իրավասության սահմաններում մասնակցել տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների կատարմանը.
- մշակել տարերային աղետների հիմնահարցերին վերաբերվող օրենսդրական և տարբեր նորմատիվ փաստաթղթերի նախագծեր.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների ոլորտին վերաբերվող միջազգային համագործակցության փաստաթղթերի նախագծերի մշակմանը,
- ստեղծել և վարել տարերային աղետները բնութագրող բոլոր տարրերի, հետևանքների կանխատեսման և կանխարգելման միջոցառումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական բազա.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների մոնիթորինգի համակարգի ստեղծման ուղղությամբ հանրապետության գիտական, գիտահետազոտական, գիտափորձարարական և նախագծային կազմակերպությունների աշխատանքներին.
- Վարչության պետի, Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.
- գրանցել և մշտապես թարմացնել ՀՀ տարածքում տեղի ունեցած տարերային աղետների վերաբերյալ տվյալների տեղեկատվական բազան.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել ռիսկերի նվազեցման, վտանգավոր տարածքներում տարերային աղետների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ծրագրերի և պլանների մշակմանը.
- մշակել տարերային բնույթի արտակարգ իրավիճակներին վերաբերվող իրավական ակտերի, նախագծերի, պլանների, ծրագրերի, մեթոդական փաստաթղթերի նախագծեր.
- նախապատրաստել տարերային արտակարգ իրավիճակների փաստերի, բնույթների, ծավալների և պաշտպանական միջոցառումների մասին անհրաժեշտ տվյալներ, նյութեր և տեղեկություններ.
- հավաքել, մշակել և վերլուծել գրանցված տարերային արտակարգ իրավիճակների և պատճառված վնասի չափերի վերաբերյալ տեղեկատվությունը.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել տարերային աղետների հետևանքով առաջացած վնասներն ու նրանց պատճառներն ուսումնասիրող հանձնաժողովների աշխատանքներին.
- իր իրավասությունների սահմաններում համակողմանի աջակցություն ցուցաբերել Ծառայության տարածքային ստորաբաժանումներին՝ տարերային ռիսկերի նվազեցման աշխատանքների իրականացման ուղղությամբ.
- իր իրավասությունների սահմաններում մեթոդական և գործնական օգնություն ցուցաբերել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ տարերային աղետների ռիսկի նվազեցման աշխատանքների կատարման ուղղությամբ:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և

մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության մայորի կոչում: